

Հաստատվել է ԵՊՀ խորհրդի

« »-----2020թ.

թիվ----- որոշմամբ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ 1902/Բ15 «Իրավաբանական գրագրություն»

Որակավորման աստիճան՝ բակալավրի կրթական ծրագիր

(«Քրեական իրավունք և դատավարություն» բակալավրի ծրագիր)

Կազմեցին՝ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ռ.Մելիքյանը,
իրավ.գիտ.թեկնածու, դոցենտ Դ.Մելքոնյանը

ԵՐԵՎԱՆ 2020

1902/Բ15 «Իրավաբանական գրագրություն» (2 կրեդիտ), շաբաթական 2 ժամ 7-րդ կիսամյակ/աշնանային, առանց եզրափակիչ գնահատման:

Դասընթացի նպատակը ուսանողներին իրավավերլուծական փաստաթղթեր մշակելու գործնական գիտելիքների հաղորդումն է:

Դասընթացի ավարտին ուսանողը.

(գիտելիք և իմացություն, որը թույլ կտա)

- կկազմի ներքին տրամաբանական կառուցվածք ունեցող իրավավերլուծական փաստաթղթեր,
- կներկայացնի իրավավերլուծական փաստաթղթեր կազմելու IRAC մեթոդը, իրավավերլուծական հիմնական ռազմավարությունները.
- կբացատրի նախադեպային իրավունքի կիրառման առանձնահատկությունները.
- կտիրապետի իրավավերլուծական ռազմավարություններին և հնարքներին
- կտիրապետի իրավավերլուծական փաստաթղթեր կազմելու լեզվական որակներին:

(բուն մասնագիտական կարողություններ)

- մեկնաբանել իրավունքի տարբեր ճյուղերի օրենսդրական դրույթները,
 - բացահայտել իրավավերլուծական ռազմավարությունների էությունը,
 - կիրառել օրենքի վերլուծություն տարաբնույթ հնարքներ,
- իրավավերլուծական փաստաթղթեր կամելու IRAC մեթոդը,
- կիրառել նախադեպային իրավունքի՝ որպես իրավունքի աղբյուրի կիրառման մեթոդաբանությանը,
 - իրավավերլուծական փաստաթղթեր կազմելիս կիրառել արդյաունավետ լեզվական որակներ և փաստաթղթին հաղորդել տրամաբանական կառուցվածք:

(ընդհանրական կարողություններ)

- օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ,
- վերլուծել փաստեր, կատարել հետևություններ,
- ստեղծագործաբար կիրառել ու զարգացնել ունեցած գիտելիքները:
-

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Բ1 մեկնաբանել ՀՀ սահմանադրական, վարչական, մունիցիպալ, ֆինանսական, քրեական, քրեակատարողական, քրեական դատավարության, քաղաքացիական, քաղաքացիական դատավարության, աշխատանքային, միջազգային և իրավունքի մի շարք այլ ճյուղերի օրենսդրության դրույթները,

Բ2. գործնականում կիրառել իրավագիտության տեսական գիտելիքները,
Բ4. կազմել իրավական ակտերի նախագծեր, պայմանագրեր, քննչական և դատավարական փաստաթղթեր,
Բ8. վերլուծել իրավական վիճակագրության և դատական պրակտիկայի նյութերը,
Գ1. օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (էլեկտրոնային և ոչ էլեկտրոնային):

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություններ, գործնական պարապմունքներ (իրավաբանական փաստաթղթերի կազմում),
2. քննարկումներ, բանավեճեր,
3. համացանցից օգտվելով անհատական հանձնարարությունների կատարում:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր քննություն: Գնահատման չափանիշները՝ ըստ քննական առաջադրանքի, միավորների քայլը՝ 0.5:

2-րդ ստուգում. . Գրավոր քննություն: Գնահատման չափանիշները՝ ըստ քննական առաջադրանքի, միավորների քայլը՝ 0.5:

Դասընթացի բովանդակությունը

Թեմա 1. Դասընթացի ընդհանուր բնութագիրը

1. Իրավաբանորեն գրագետ փաստաթղթի կազմումը որպես իրավաբանի մասնագիտական հմտություն:

2. Իրավաբանորեն գրագետ փաստաթուղթ կազմելու հմտությունը մասնագիտական գործունեության հաջողության գրավական:

3. Իրավաբանական փաստաթուղթ կազմելու առանձնահատկությունները՝ պայմանավորված նման փաստաթղթերի դերով և նշանակությամբ:

4. Պատճառաբանվածությունը որպես իրավաբանական փաստաթղթի հիմնական բնութագրիչ:

Թեմա 2.«IRAC»-ը որպես իրավավերլուծական մեթոդ և տեքստուալ միավոր

1. Իրավական-վերլուծական մեթոդաբանության գործնական նշանակությունը:

2. IRAC-ը որպես իրավավերլուծական մեթոդ:

3. IRAC-ը որպես տեքստուալ միավոր: Ստատիկ և դինամիկ դիտանկյուններ:

4. IRAC-ի տարբերակումներն ու կիրառման սահմանները:
5. Հարցադրում և հետևություն (IraC):

Թեմա 3. «IRAC»-ի «կանոն» և «վերլուծություն» հասկացանքների (iRAC) ընդհանուր բնութագիրը

1. Կիրառման ենթակա կանոնի որոշումը:
2. Կանոնի շարադրմանը ներկայացվող պահանջները:
3. Կանոնի մասնատում:
4. Վերլուծությունը որպես IRAC-ի հիմնական իրավաբանական միավոր:

Թեմա 4. Իրավավերլուծական ռազմավարություններ և հնարքներ

1. Իրավավերլուծական ռազմավարությունների ընդհանուր բնութագիրը:
2. Տեքստուալիզմ:
3. Օրիգինալիզմ:
4. Ռեալիզմ:
5. Իրավավերլուծական հնարքների ընդհանուր բնութագիրը:

Թեմա 5. Օրենքի վերլուծություն (ինտերնալ հնարքներ)

1. Օրենքի վերլուծության ինտերնալ ընարքների էությունը և նշանակությունը:
2. Տեքստային մակնաբանում:
3. Նպատակային մեկնաբանում:
4. Eiusdem generis:
5. Expressio unius:
6. Շաղկապներին և կետադրությանը վերաբերող կանոններ:

Թեմա 6. Օրենքի վերլուծություն (էքստերնալ հնարքներ)

1. Էքստերնալ հնարքների ընդհանուր բնութագիրը:
2. Իմաստային էքստերնալ հնարքներ:
3. Կոլիզիոն հնարքներ:
4. Կանոնի կիրառելիությունը ժամանակի ընթացքում, տարածության մեջ և ըստ անձանց շրջանակի:
5. Օրենքի նպատակի բացահայտումը:
6. Իրավունքի և օրենքի անալոգիա:

Թեմա 7. Նախադեպային վերլուծության հնարքներ

1. Նախադեպային իրավունքի ընդհանուր բնութագիրը:
2. «Ratio decidendi» և «Obiter dictum»:
3. Իրավական պատճառաբանման գործընթացը նախադեպային իրավունքում:
4. Անալոգիա և դեդուկցիա:

5. Դատական իրավաստեղծագործության կիրարարման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում:

Թեմա 8. Իրավաբանական տեքստի լեզվական որակների ներածություն: Արդյունավետ նախադասություններ:

1. Իրավավերլուծական տեքստի լեզվական չափանիշի խնդիրը:
2. Արդյունավետ նախադասությունների կազմմանն ուղղված հանձնարարականներ:

Թեմա 9. Արդյունավետ պարբերություններ:

1. Արդյունավետ պարբերությունների կազմմանն ուղղված հանձնարարականներ:

Թեմա 10. Իրավական ակտերի և դատական ակտերի շտեմարաններ

1. Իրավական ակտերի «Արլիս» շտեմարանից որոնման կանոններ:
2. Դատական ակտերի «Դատալեքս» շտեմարանից որոնման կանոններ,
3. Եվրոպական դատարանի դատական ակտերի «HUDOC» շտեմարանից որոնման կանոններ:

Վերաբերելի մասնագիտական գրականության և նորմատիվ իրավական ակտերի ցանկ

Իրավաբանական գիր և վերլուծություն, Մոլիտերնո Ջ., Մելիքյան Ռ., Մելքոնյան Դ. Ուսումնական ձեռնարկ / Խմբ.՝ Գ. Ղազինյան, 3-րդ հրատ. փոփոխությունն. Ու լրացումներով, Երևան ԵՊՀ հրատ, 2010, 300 էջ:

Վերաբերելի դատական ակտերը (այդ թվում՝ ՄԻԵԴ վճիռները) և առավել ընդլայնված գրականության ցանկը տեղադրված է ԵՊՀ էլեկտրոնային ուսուցման հարթակի՝ դասընթացին վերաբերող էջում: